

Արձանագրություն N 2-03/18

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2018 թ.-ի
մարտի 15-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա. (գ.գ.թ.), Ավետիսյան Ս.Ա. (տ.գ.թ.), Ծատրյան Ա.Ա., Բաղունց Գ.Ռ., Հակոբյան Շ.Հ., Դավթյան Շ.Ա., Շահբազյան Ա.Վ., Սայիյան Ռ.Գ., Զաքարյան Գ.Է. (ուսանող), Գասպարյան Ի.Ա. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող), Ծատրյան Ս.Բ. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ռ.Մ.:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսումնառության գործընթացի կազմակերպման» կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
- 2.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանում աշխատավարձի վարձատրության չափի սահմանման» կարգում փոփոխություններ կատարելու մասին:
3. Հաղորդի շրջանի Մեխակավան բնակավայրի վերականգնման, բարեկարգման և զարգացման և Սարուշեն համայնքի անասնապահական համալիրի շահագործման նախապատրաստելու նախագծահաշվարկային փաստաթղթերի մշակման աշխատանքների ընթացքի և աշխատանքային խմբում համալրում կատարելու մասին:
4. Այլ հարցեր:

Լսեցին 1 - «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսումնառության գործընթացի կազմակերպման» կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Որոշեցին 1 - «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսումնառության գործընթացի կազմակերպման» կարգում կատարել նշված փոփոխությունները և լրացումներ

-2-րդ կետի 2.2 ենթակետի փակագծերում ներկայացված «17-ը» փոխարինել «16»-ի.

-2-րդ կետի 2.10 ենթակետի երկրորդ նախագասության «17-րդ» թիվը դարձնել «16-րդ».

-3-րդ կետի 3.3 ենթակետի երրորդ նախադասությունից հետո ավելացնել չորրորդ նախադասություն հետևյալ ձևակերպմամբ.

«Փորձուսուցման եղանակով ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել նաև ԱՀ և արտերկրի ուսումնագիտական և արտադրական կազմակերպություններում».

-4-րդ կետից հետո ավելացնել «Արտերկրի դասախոսների կողմից ուսումնական պարապմունքների կազմակերպումը» վերնագրով 5-րդ կետ՝ հետևյալ ենթակետերով.

5.1 Ուսումնական գործընթացը արտերկրից (ՀՀ և այլ երկրներ) դասախոս ներագրավելու դեպքում ուսումնառությունը կազմակերպվում է համակցված դասացուցակներ կազմելու միջոցով:

5.2 Առարկաները, որոնք դասավանդվում է արտերկրի դասախոսի կողմից, իրականացվում է «փաթեթային» եղանակով՝ ըստ փուլերի:

5.3 Առարկաների դասավանդումը արտերկրի դասախոսի կողմից իրականացվում է 2 եղանակով.

ա) համալսարան ժամանած դասախոսը իրեն ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը (դրա մասը) իրականացնում է ինտենսիվ դասավանդման եղանակով: Այդ ընթացքում համապատասխան խմբի ուսանողները ուսումնառում են այդ առարկան(ները)՝ ազատվելով հիմնական դասացուցակով նախօրոք նշված պարապմունքներից,

բ) խումբը (դրա մասը) գործուղվում է արտերկիր, որտեղ համալսարանի ներկայացուցիչները կազմակերպում է ուսումնական պարապմունքները:

5.4 Ուսումնական մասը սույն բաժնով նախատեսված ուսումնական պարապմունքների կազմակերպման մասին նախօրոք տեղեկացնում է ուսանողներին և դասավանդող դասախոսներին:

Լսեցին 2 - «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում աշխատավարձի վարձատրության չափի սահմանման» կարգում փոփոխություններ կատարելու մասին:

Որոշեցին 2 - «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում աշխատավարձի վարձատրության չափի սահմանման» կարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

-12-րդ կետի երկրորդ ենթակետի «0,5» թիվը փոխարինել «0,3» թվի, իսկ չորրորդ ենթակետի «1,2» թիվը փոխարինել «0,6» թվի:

Լսեցին 3 - Հադրուֆի շրջանի Մեխակավան բնակավայրի վերականգնման, բարեկարգման և զարգացման և Սարուշեն համայնքի անասնապահական համալիրի շահագործման նախապատրաստելու նախագծահաշվարկային փաստաթղթերի մշակման աշխատանքների ընթացքի և աշխատանքային խմբում համալրում կատարելու մասին զեկուցեց Գ.Գասպարյանը:

Որոշեցին 3.1 - Ընդունել ի գիտություն Հադրուֆի շրջանի Մեխակավան բնակավայրի վերականգնման, բարեկարգման և զարգացման նախագծահաշվարկային փաստաթղթերի

մշակման աշխատանքների ընթացքի և աշխատանքային խմբում համալրում կատարելու մասին Պ.Գասպարյանի տեղեկատվությունը:

3.2 - Հաղործի շրջանի Մեխակավան բնակավայրի վերականգնման, բարեկարգման և զարգացման և Սարուշեն համայնքի անասնապահական համալիրի շահագործման նախապատրաստելու նախագծահաշվարկային փաստաթղթերի մշակման աշխատանքային խմբում ընդգրկել Միեր Սուրենի Ազեգյանին:

Լսեցին 4 - Գիտխորհրդի քննարկմանը ներկայացվեց Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրերի հայցորդ՝ Լ.Սարգսյանի դիմումը, համաձայն որի խնդրում զեղչ կատարել ուսման վարձավճարում:

Որոշեցին 4 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրերում ընդգրկված հայցորդ՝ Լ. Սարգսյանի 2017-2018 ուստարվա ուսման վարձավճարում կատարել 25%-ի չափով զեղչ:

Նախագահ՝	ստորագրություն	Հ.Վ.Թոքմաջյան
Քարտուղար՝	ստորագրություն	Ա.Ա.Առաքելյան